

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ
ՎԵՏԱՓԱՌ ՆԱՅՐԱԴԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԺՈՂՈՎԻՆ

Նայրապետական օրհնությամբ ու քրիստոնեական ջերմ սիրով կ'ողջունենք Նայապետական Նանրապետության Վսեմաշուք Նախագահ Տիար Սերժ Մարգարեանը: Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Նայոց Կաթողիկոսը: Նայրապետական օրհնությամբ ու հայրական ջերմ սիրով կ'ողջունենք հայ եկեղեցույ Գերաշնորհ արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները, որոնք հաւաքուած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հրաւերով երկու Վեհափառ Նայրապետներուն, անոնց օրհնությամբ ու ներկայութեամբ միասնաբար աղօթելու, միասնաբար խորհրդակցելու եւ որոնելու Նայ Եկեղեցին դէպի ներքին բարեկարգութիւն առաջնորդող ազդու միջոցներն ու ճիշդ ճամբաները:

Արդարեւ, պարմական կարելի է որակել եպիսկոպոսաց ներկայ ժողովը. պարմական՝ մեր եկեղեցույ ամբողջականութիւնը ներկայացնող իր հանգամանքով, պարմական՝ բազմազան ու այլազան մարտահրաւերներով լեցուն մեր եկեղեցույ ու ժողովուրդի կեանքի ներկայ վճռական հանգրուանին իր կայացումով, պարմական՝ մանաւանդ իր առաջադրած վեհ նպատակով: Արդ, այս պարասխանատւութեամբ ու նախանձախնդրութեամբ հարկ է մօտենալ ներկայ ժողովին: Մեր եկեղեցույ ու ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ փայտն նոր էջ մը բանալու յանձնառութեամբ հարկ է մասնակից դառնալ Եպիսկոպոսաց Ժողովի աշխատանքներուն:

Եթերորդ դարուն Ներսէս Գ. Իշխանցի Կաթողիկոս Վարդապետի Կոնստանտնուպոլսի խորապէս կը վրդովի ի Կոնստանտնուպոլսի եկեղեցիներէն ներս կատարուող աններդաշնակ ծիսակատարութեան: Այս դառն փորձառութիւնը, Նայրապետը կը մղէ գումարելու Դուինի երկրորդ ժողովը, 648-ին, եւ հաստատելու շարք մը կանոններ հայ եկեղեցույ ծիսական, բարոյական ու դաստիարակական մարզերուն առնչուած: Եթէ այսօր Ներսէս Գ. Իշխանցի Կաթողիկոսը երկինքէն իջնելով շրջէր մեր եկեղեցիներէն ներս, վստահաբար դարձնալ պիտի ընդվզէր Կոնստանտնուպոլսի մեր եկեղեցույ պարզած վարառողջ վիճակը...:

Պարմութեան ընթացքին մեր հայրապետներուն կողմէ եղան բազմաթիւ նախաձեռնութիւններ Նայ Եկեղեցին բարեկարգելու առաջնորդող: Մեր եկեղեցույ պարմութիւնը լեցուն է եկեղեցույ կեանքի զանազան բնագաւառներուն առնչուած կանոններով, սկզբունքներով եւ ուսուցումներով: Սակայն այնքան արմատական ու արագ փոփոխութիւններ տեսնելու ունեցան ընկերութեան կեանքին մէջ, որ այսօր, փաստօրէն հսկայ վիճակ մը գոյացած է մեր հայրերու հաստատած կանոններուն ու ներկայ ժամանակներու մրահոգութիւններուն ու մարտահրաւերներուն միջեւ: Մեր պարմութեան վերջին դարերու պայմանները, երբ մեր ժողովուրդին ու հայրենիքին գոյութիւնը խնդրոյ առարկայ դարձած էր, չներեցին, որ մեր եկեղեցին լծուի բարեկարգչական ծրագրուած ու համապարփակ

աշխատանքի: Այսօր, հազար փառք կու պանք Աստուծոյ, որ մեզի այս եզակի պատկերները ընծայեց երկու Վեհափառ Նայրապետներուն նախաձեռնութեամբ ու առաջնորդութեամբ եւ մեր եկեղեցոյ եպիսկոպոսներուն մասնակցութեամբ լծուելու ծիսական բարեկարգութեան այնքան հրամայական գործընթացքին:

Ի՞նչ կը հասկնանք «բարեկարգութիւն» ըսելով.- տոսկ անցեալի աւանդութեանց վերականգնումը, մեր եկեղեցոյ ծիսական կարգին վերադասաւորումը կամ կրճատումը, լոկ լեզուի փոփոխութիւնը, եւ կամ ծիսական նոր համակարգի մը հաստատումը՝ մեր կեանքին ներկայ դրաւածքին պարշաճող: Նարցադրումներ, որոնք պէտք է կատարուին իրապաշար մօտեցումով, հարցեր, որոնք պէտք է քննարկուին քննական ոգիով Եպիսկոպոսաց Ժողովի ծիրէն ներս:

Մեր հայեցողութեամբ, բարեկարգութիւնը ըստ էութեան պէտք է ըմբռնել որպէս եկեղեցոյ կեանքին ու մրաժողութեան, վկայութեան ու առաքելութեան վերաբերման մը, վերանորոգումը ու վերակենսաւորումը: 1961-ին Կաթողիկ եկեղեցին գումարեց Վապիկանի Երկրորդ Ժողովը՝ եկեղեցին նոր ժամանակներու պարշաճեցնելու ու բարեկարգելու (Յովհաննէս 23 Պապին բառով՝ աճիօրնամէնթօ) առաջադրութեամբ: Արդարեւ, եկեղեցին կը վերածուի թանգարանի, եթէ չվերանորոգուի: Եկեղեցոյ բարեկարգութիւնը ու վերանորոգումը պէտք է սկսի ծէսով, որովհետեւ եկեղեցոյ կեանքի բոլոր փարածքներուն, բնագաւառներուն ու արտայայտութիւններուն մէջ, ներառեալ եկեղեցոյ աստուածաբանական մրաժողութիւնը ու դաստիարակական ուսուցումները, ծէսը կեդրոնական տեղ ու առանցքային դեր ունի:

Անհրաժեշտ է սակայն, որ մեր եկեղեցոյ ծիսական կեանքը բարեկարգելու ձգտող մեր աշխատանքը կատարուի մեր եկեղեցոյ ինքնահասկացողութեան խորքին վրայ: Արդարեւ, ոմանք հայ եկեղեցին կը նկատեն լոկ հոգեւոր կառոյց, ուրիշներ՝ ազգային հաստատութիւն: Աշխարհականներու գործօն ներկայութիւնը մեր եկեղեցիէն ներս ոմանք փարօրինակ կը գտնեն, ուրիշներ՝ բնական. ոմանք հոգեւորականներու ազդու դերակատարութիւնը կը նկատեն դրական, ուրիշներ՝ անընդունելի: Այս հակադիր մօտեցումները տեսական կամ պարագայական չեն: Ամունք սերտօրէն առնչուած են մեր եկեղեցոյ պարմական զարգացման հոլովոյթին: Այսպէս, Արեւելեան Նայսաբանի մէջ, պոլոժնիայի հաստատումով եւ հետագայ քաղաքական պայմաններու յառաջացումով, մեր եկեղեցոյ կեանքին ու առաքելութեան մէջ հոգեւորականը գրաւեց առանցքային տեղ: Իսկ Կիլիկիոյ մէջ, Ազգ. Սահմանադրութեան հաստատումով եւ սփիւքեան բոլորովին փարբեր պայմաններու սրելծումով եկեղեցոյ կեանքին մէջ աշխարհական դասը դարձաւ կարեւոր ներկայութիւն:

Նայ եկեղեցոյ ինքնահասկացողութեան այս փարբեր շեշտաւորումները, որոնք նաեւ ձեւաւորեցին փարբեր գործելակերպեր ու մրաժելակերպեր, անհրաժեշտ է որ ներդաշնակուին պարմութեան ընթացքին կազմաւորուած մեր եկեղեցոյ հարազատ ինքնաճանաչման հետ, որ իր մէջ կը պարփակէ մեր ժողովուրդի ամբողջականութիւնը՝ հոգեւորականը ու աշխարհականը իրենց իւրայայտուկ դերերով: Այս իրողութենէն մեկնելով Նայ Եկեղեցոյ բարեկարգչական բոլոր ժողովներուն, հոգեւորականներու կարգին իրենց

մասնակցությունը բերած են նաև մրատրականներ, նախարարներ ու նոյնիսկ գորավարներ: Նկրտաբար, մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցությունը ներկայ գործընթացին, յարկապէս երբ մեր ժողովուրդին կեանքին հետ անմիջականօրէն աղերս ունեցող հարցերու քննարկումը կը կատարուի, կը նկատենք հրամայական: Մեր ժողովուրդը իր եկեղեցին յուզող հարցերուն նկատմամբ ըսելիք եւ ընելիք ունի, պէտք է ունենայ:

Մեր խորհրդակցություններուն ընթացքին անհրաժեշտ է նաև նկատի ունենալ հետևեալ կետեր երեւոյթը: Պայմաններու պարպադրանքով, մեր եկեղեցւոյ հասարակութեանկան ու վարչակազմակերպչական երեսը աւելի շեշտուեցա՝ ի հեճուկս անոր ժողովրդակեղծուն նկարագրին ու ազգային դերը յուսարձակի փակ ամուտեցա՝ ի հեճուկս անոր հոգեւոր միջուկին: Անկասկած, ընկերութեան կեանքին մէջ ինքզինք արտայայտող եկեղեցին կարիքը ունի վարչակազմակերպչական դրութեան, ինքնարտայայտման կերպերու ու իր գոյարեւումը ապահովող կառոյցներու: Մակայն եկեղեցին իր էութեամբ հոգեւոր ու բարոյական արժէքներով ու ճշմարտութիւններով շաղախուած ժողովուրդի համայնական կեանքն է: Եկեղեցի շինելը բնականաբար կարեւոր է, սակայն եկեղեցի դառնալը շար աւելի կարեւոր է: Նո՛ւ է եկեղեցւոյ գոյութեան պարճաւոր, անոր առաքելութեան կիզակէտը: Նկրտաբար, եկեղեցւոյ կեանքին առնչուած ունէ մէկ դրութիւն, կառոյց կամ երեւոյթ, ներառեալ ձեւը ինքնակեղծուն ու ինքնանպատակ չէ: Եկեղեցւոյ ինքնաարտայայտութեան կերպերը պէտք չէ շփոթել եկեղեցւոյ կոչումին հետ: Եկեղեցին աստուածաբար առաքելութիւն է իր գոյութեամբ ու էութեամբ, իր ծառայութեամբ ու կոչումով: Մեր եկեղեցւոյ առաքելութեան մէջ հոգեւոր ու ազգային փարածքները պէտք է սերտօրէն ներդաշնակուին: Մեր աշխարհաբնին յարակ նպատակը պէտք է ըլլայ եկեղեցւոյ առաքելութիւնը վերակենսաւորել ու գայն մեր ժողովուրդի կեանքին մէջ կենսագործել: Այս հեռանկարով կ'ուզենք ձեր ազնիւ ուշադրութեան յանձնել հետևեալ կէտերը.-

1) Անհրաժեշտ է Եպիսկոպոսաց Ժողովը վերածել հաւաքական գործընթացի, ո՛չ սոսկ հերթական նիստեր գումարող մնայուն կառոյցի, հարկ եղած պարագային մասնակցութեամբ նաև մեր եկեղեցւոյ նուիրապետական այլ ասորիճաններու պատկանող հոգեւորականներուն, նոյնիսկ աշխարհական մասնագէտներուն՝ համաձայն քննարկուելիք նիւթերու բնոյթին ու փարողութեան: Յիշեալ գործընթացքին հիմնական աշխարհները պէտք է կատարուի մասնագիտական յանձնախումբերու կողմէ, ուր ուսումնասիրություններու ու քննարկումներու կողքին յապուկ փող պէտք է յարկացուի մեզ շրջապարտող ներկայ պայմաններէն եկող մրահոգություններուն ու մարտահրաւերներուն:

2) Անհրաժեշտ է հաւարարիմ մնալ Նայ Եկեղեցւոյ անցեալի աւանդութիւններուն՝ միաժամանակ զանոնք դարձնելով համահունչ ներկայ ժամանակներուն: Աւանդութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ կենսական է. ան ժողովուրդի մը ներքին ապրումներուն ու ձգտումներուն արտայայտութիւնն է, ուր մշակոյթը ու միջավայրը բնականաբար իրենց կարեւոր դերը ունին: Ձեր հայրերու աւանդութիւնը պիտի բռնեցէք (Բ. Թեո. Բ. 15), կ'ըսէ առաքեալը: Նկրտաբար, հարկ է ըլլալ աւանդապահ սակայն ո՛չ աւանդամոլ: Անհրաժեշտ է մեր աւանդութիւնները վերանորոգել ու ձեւաւորել այնպիսի կերպով, որ դառնան ներդաշնակ մեր ներկայ իրականութեան:

3) Անհրաժեշտ է հաւաքարիւմ մնալ համաքրիստոնէական արժէքներուն, սկզբունքներուն ու աւանդութիւններուն՝ միաժամանակ ըլլալով նախանձախնդիր Նայ Եկեղեցոյ իւրայարույ ինքնութեան: Այս սկզբունքէն մեկնելով իրենց ուղղութիւնը առած են մեր եկեղեցոյ բոլոր բարեկարգչական շարժումները, մեր հայրերու որդեգրած դաւանաբանական կեցոածքները եւ ծառայած աստուածաբանական երկխօսութիւնները օտար եկեղեցիներուն հետ: Ներկայ ժամանակներուն, երբ մեր եկեղեցին ամէնօրեայ յարաբերութեան մէջ է այլ եկեղեցիներու հետ, անհրաժեշտ է որ մեր եկեղեցոյ ծիսական, աստուածաբանական ու դաւանաբանական մարզերուն առնչուած իւրայարկութիւնները պահենք անխախտ, միաժամանակ ամուր պահելով մեր համաքրիստոնէական արմարները:

4) Անհրաժեշտ է հաւաքարիւմ մնալ Նայ Եկեղեցոյ ամբողջականութեան ու միութեան անվթար պահպանման՝ միաժամանակ ոչ-հիմնական հարցերուն գծով զգայնութիւն ու ճկունութիւն ցուցաբերելով քրդական իւրայարույ պայմաններուն նկատմամբ: Այսօր երբ մէկը շրջագայի մեր եկեղեցիներէն ներս, ինքզինք դէմ յանդիման պիտի գտնէ ակնյայտ հակասութիւններու ու տարբերութիւններու՝ յարկապէս արարողական ձեւերուն, ծիսական աւանդութիւններուն ու երաժշտական եղանակներուն կապուած: Արդարեւ, տասնամեակներու ընթացքին իւրաքանչիւր Նուիրապետական արքեպիսկոպոս, իւրաքանչիւր առաջնորդ, նոյնիսկ իւրաքանչիւր ծիսավեր քահանայ իր «բարեկարգութիւն»ը կատարած է, եւ ընդհանրապէս պարագայական կերպով, այսպէս ստեղծելով խառնաշփոթ կացութիւն մեր եկեղեցիէն ներս: Նայ Եկեղեցոյ աշխարհացոյի ներկայութիւնը եւս իր ժխտական հետեւանքները ունեցած է այս ուղղութեամբ: Արդ, անհրաժեշտ է կատարել յստակեցում, սրբագրում, դաստառում ու զգրում մեր եկեղեցոյ ամբողջականութիւնը վերաշէշտող:

Յաջողութեան ճամբան կը սկսի ինքնաքննադատութեամբ: Մեր վերքերը ճիշդ տեսնելու եւ ցաւերը ճիշդ զգալու քաջութիւնը պէտք է ունենանք: Սակայն, սիրելի՛ Սրբազան հայրեր, միաժամանակ պէտք է ըլլալ իրապաշտ: Նայ եկեղեցոյ ծիսական կեանքէն ներս խոր արմարներ ներած թերութիւններու սրբագրումը, ինչպէս նաեւ հինին վերանորոգումը կը կարօտի երկար, տեւաշունչ ու հետեւողական աշխատանքի: Եպիսկոպոսաց ժողովին կողմէ կատարուելիք աշխատանքէն շատ աւելի դժուար պիտի ըլլայ առնուած որոշումներուն գործադրութիւնը թեմական եւ ծխային մակարդակներու վրայ: Ներուարար, դիւրին աշխատանքի չէ որ կը ձեռնարկենք: Պէտք չէ սակայն յուսալքութիւնք: Սուրբ Նոգոյ ներգործութեամբ զօրացած, մեր եկեղեցոյ առաքելութեան նկատմամբ մեր ունեցած յանձնառութեամբ ամրապնդուած ու եղբայրական ջերմ սիրով զօրեպնդուած միասնաբար պիտի լծուինք այս նուիրական աշխատանքին վերանորոգ հաւաքով եւ բարձրագոյն աստիճանի պատասխանատւութեամբ: Այս կը սպասէ մեզմէ մեր եկեղեցին: